ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- նոյեմբերի 2022 թվականի №----Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի №296Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի հուլիսի 4-ի №296Ա որոշմամբ «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում՝ Մեղրիգետ գետի վրա, «Մեղրի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0606 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0606 լիցենզիա)՝ մինչև 2034 թվականի հոկտեմբերի 18-ը գործողության ժամկետով, որից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 2-ը կառուցման ժամանակահատված,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 28-ի №146Ա որոշմամբ ԼԷ №0606 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 2-ը, ինչի համար նույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է այն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 5 750 000 (հինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 17-ը գործողության ժամկետով, ինչն Ընկերության կողմից չի կատարվել,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 14-ի №262Ա որոշմամբ Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 28-ի №146Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի խախտման հիմքով կասեցրել է ԼԷ №0606 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը՝ այն է 5 750 000 (հինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի

երաշխիք ներկայացնելը, սակայն Ընկերությունը մինչև ԼԷ №0606 լիցենզիայով ամրագված կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել ԼԷ №0606 լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը,

դ) Ընկերության ներկայացրած՝ «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 9-ի №652-6018 գրությամբ Հանձնաժողով ներկայացված և 2019 թվականի նոյեմբերի 29-ի №652-17036 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված ԱԲԵՆ17/47-01 երաշխիքի գործողության ժամկետն ավարտվել է 2021 թվականի հունիսի 16-ին,

ե) Ընկերությունը, ԼԷ №0606 լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում՝ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 2-ը, չի ավարտել Կայանի կառուցման աշխատանքները և Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել ԼԷ №0606 լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ ԼԷ №0606 լիցենզիայով սահմանած կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով,

զ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2022 թվականի սեպտեմբերի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի հիմքով ԼԷ 0606 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի № ԳԲ/34.1-Մ4-3/3087-2022 գրությամբ,

է) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

ը) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ի թիվս այլնի, էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում Հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձը նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացրել, ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է, և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, ապա նույն

հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարը՝ Հայաստանի Հանրապետությ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը,

թ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 3-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանման ենթակա գումարի հաշվարկման բազա է համարվում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանման ենթակա գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի, իսկ կայանի վերակառուցման դեպքում դրա արդյունքում ավելացող հաշվարկային (տեղակայվող) հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500 000 դրամը,
- 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, բացառությամբ Կարգի 46.1-ին կետի համաձայն լիցենզիայի տրամադրման մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու դեպքի,
- 9-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 6-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, նույն կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը,

ժ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը մինչև ԼԷ 0606 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ 2022 թվականի սեպտեմբերի 2-ը, չի վերացրել ԼԷ 0606 լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան

հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել լիցենզիայի կասեցումը, Ընկերությունը չի ավարտել Կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել ԼԷ №0606 լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ ԼԷ №0606 լիցենզիայով սահմանած կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, ինչը «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն լիցենզիայի դադարեցման հիմք է: Միաժամանակ, հաշվի առնելով, որ Ընկերության ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է 2021 թվականի հունիսի 16-ին, Կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ 5 750 000 (հինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման պարտավորությունը կրում է Ընկերությունը, և

հիմք ընդունելով ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը և 9-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 4-ի «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Մեղրի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №296Ա որոշումը:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 900005028130 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել 5 750 000 (հինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումար:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- նոյեմբերի 2022թ.